

թէ գկախարդութիւն ինչ արարեալ են զի մի մեոցի. բայց վերջապէս մեռաւ: Որ և էր Լօթերական կրօնիւ. կարգաւորք, նաև եպիսկոպոսն իսկ անձամբ խնդրեցին ի նմանէ զընդունումն ուղղափառ հաւատոյ, բայց նա ոչ ընդունեալ, այլ ասացեալ թէ ի յայսմիկ կրօնի մեռանիմ յորում ծնեալ եմ և սնեալ: Իսկ զղահիճն եզին ի բանտի, թէ ընդէր բազմից բախմամբ էհատ զգլուխն և վերջապէս մորթեաց: Նաև զոմանս ովֆիցիալս ևս որք ընդ սա էին ի նիշն, ձգեալ ի պաշտօնից, վատահամբաւ արարին և տարագիր: Ասեն ևս թէ զօտոական ճէնտոալն Աէֆինտօռ, որ նա ևս Լօթերական է և անհաւատարիմ, կայսերն, որ այսքան ժամանակ ի բանտի է ի Վիէնա և ի քննութեան, զնա ևս բերելոց են աստ, և հատանելոց են զգլուխն...:

Մնամ պատրաստական ծառայ ամենայնի
Հայր Մեքայէլ վրդպտ. Սեբաստացի

Յամի տեառն 1738ին
ի մարտի 22ին
Տերորդ զիր ի սոյն ամի
ի Պէլրդատու

ՀԷ.

Պելկրատու քաղաքական կեանքի և ղէպքերու շուրջ Հ. Միքայէլ շատ աւելի մանրամասնութեանց կ'իջնէ: Ըսենք սակայն, որ եթէ իր նպատակն է — ինչպէս կը տեսնենք — միշտ տեղեակ ընել զԱբբահայրը իր Միաբանութեան այդ ստանձնած առաքելութեան մասին, շարժառիթ մ'ալ ունի անկեղծօրէն ու խղճամիտ կերպով անդրադարձնելու, որ սոյն պարագաներուն տակ իր յառաջացեալ տարիքն ու տկարութիւնները չեն նպաստեր գործերու յաջողութեան և յառաջացման:

Գերշարգեցելոյ Աբբայ ձօրոյ մերոյ, տեսաւ տեսաւ Միսիրարայ
Աստուածաբանուրիան վարդապետի

... անն և երկիւղն տածկին հալէ և ցամաքեցուցանէ զոսկերս իմ, զի ի շաբաթոջն երկու և երեք անգամ վայնասուն ելանէ ի գիշերի թէ եկն տաճիկն: Յաւազ ուրբաթու ի մէջ գիշերի, յորում ժամում սկսանելոց էաք զժամն, տեսաք արտաքոյ պարսպին ձայն աղաղակի և լալոյ, և արձակմանց հրացանից. բազմաց թուեցաւ հաւաստելիւ թէ տաճիկք իցեն եկեալ. երևակերպեցէք, թէ զինչ սիրտ մնայ կատարել զպաշտօն շարձարանաց տեառն. բայց որ ինչ և իցէ զկնի հանդարտմանն կատարեցաք արենախառն սրտիւ. և յետ ոմանց ժամուց նոյն զունակ աղաղակ և ձայն հրացանից յայլ կողմանէ, և յայտ աւուրս սիրտս ի փորիս տրորեալ եղև, ոչ քուն և ոչ հանդարտութիւն, մինչև լուսացաւ. իմացաք թէ ոացք աւազակք և ասպատակօղք են եկեալ, ասպատակեալ, և կալեալ զանձինս տարեալք: Չկնի երկուց աւուրց ի գիշերի երկրորդում զատկի, նոյնպէս յայլ կողմանէ վայնասուն եղեալ, մինչև հաւատալ վերակացուաց քաղաքիս թէ տաճիկք եկեալ են, վասն այսորիկ գաղտ դրամբ գիշերով զհիւանդս ի հիւանդանոցէ որ է արտաքոյ պարսպին, ի ներքս ածին: Բայց ի ցերեկեան և այս ստեցաւ: Սակայն պէտպէս զրոյց զմեզ վշտացուցանեն, մերթ ընկղմեն ի ջուր և մերթ մուծանեն ի հուր, մեծ սըլտաբեկութիւն գոյ աստ. զինու[ո]րք բաւական ոչ գոյ, պատրաստութիւն ոչ գոյ, կերակուր ոչ գոյ, ասեն զալոց է: Երբ զրոյց լինի ընդ ոմանց ովիցիալից, կամ ընդ այլոց լէմսէից, ասեն, թուրքն ոչ է կարօղ գալ ի ներքոյ այսր, որպէս ասէին վասն փալամիտին նափօրոյ. մօթօն համեմատութեամբ առ սա զաւելի պատրաստութիւն և զգօրս ունէր քան զսա: Պատրաստութիւն սոցա ի բոլոր ձմեռանս մինչև ցայժմ զփալիֆիքատ անկել, և